



**Նախագահ**
**Հենրի Բ. Այրինգ**
Առաջին Նախագահության
երկրորդ խորհրդական

# Հիսուս Քրիստոսն ապրում է

Տարվա այս ժամանակն օգնում է մեզ հիշել Փրկչի զոհաբերությունը և Նրա հարությունը գերեզմանից:

Մի անգամ Երուսաղեմում ես կնոջս հետ կանգնած էի մի գերեզմանի մուտքի մոտ: Ներսում՝ պատի մոտ, տեսանք մի քարե նստարան:

Սակայն մի այլ պատկեր եկավ մտքիս: Ես մտածեցի Մարիամի մասին՝ դատարկ գերեզմանի մոտ կանգնած: Նա արտասվում էր, քանի որ Փրկիչը մահացել էր: Նա չգիտեր, թե որտեղ էր Նրա մարմինը:

Այնուհետև «հետ շրջվեց ու տեսավ Հիսուսին կանգնած, սակայն չհասկացավ, որ Հիսուսն է» (Հովհաննես 20.14): Մարիամը կարծեց, թե Նա պարտիզպանն էր:

«Հիսուսն ասաց նրան. «Մարիամ» (Հովհաննես 20.16): Այժմ Մարիամը ճանաչեց Նրան: Նա գիտեր, որ Հիսուսը հարություն էր առել:

Քանի որ Հիսուս Քրիստոսը հաղթեց մահին, Երկնային Հոր բոլոր զավակները հարություն կառնեն այնպիսի մարմնով, որը երբեք չի մահանա:

Ես շնորհակալ եմ մեր Երկնային Հորը՝ Իր Սիրելի Որդու պարգևի համար: Ես երախտապարտ եմ, որ Նա քավեց մեր մեղքերը և բարձրացավ Հարությամբ: Ես վկայում եմ, որ Հիսուսը հարություն առած Քրիստոսն է, մեր Փրկիչը և մեր կատարյալ օրինակը: ●

Հատվածներ հետևյալ ելույթներից. «Որպեսզի Նրա Հոգին ձեզ հետ լինի», *Լիահոնա,* մայիս 2018, 86-89, և «Նա հարություն առավ», *Լիահոնա,* ապրիլ 2013, 4-5:







## Սուրբ Զատիկի պատմության անիվը

Կտրեք շրջանները և առաջին շրջանը դրեք մյուսի վրա: Կենտրոնում մի անցք բացեք և դրանք ամրացրեք քորոցով: Այնուհետև շրջեք վերևի շրջանը՝ Զատիկի պատմությունը պատմելու համար: